հայ գիւղն որ վերջի երկու տարուան մէջ մեծ մասը գաղթեցին ռուսական հողը, այժմ կան 20 տուն հայ և գաղթողներու կալուածներն գրաւած են քրդեր։

Ղարա-Պազարէ մի ժամ հարաւ կայ Ջուճան հայ գիւղն 30 տնուոր, որք մեծաւ մասամբ գաղթած են։

Ջուճան Նպատայ արևելեան կողմն Մուրատի ձախ ափէն դէպի հարաւ երկարացած մի դաշտագետնոյ վերջաւորութեան վերայ է. ուր կայ մի եկեղեցի խաչաձև շինուած, որոյ կամարներէն խոնարհած է, բայց մնացած մասի բարձրութիւնը զմարդ կը հիասթափէ։

Ջուճանէ 2 ժամ արևելեան հարաւ, և Դիւատինայ ուղղակի հարաւն, կան բազմաթիւ ջերմուկներ։

Այս տեղ կը գտնուին ամենաընտիր ջերմուկներ և անհաշիւ. այս ջերմուկներու հիանալի վայրն կարժէր ընդարձակ նկարագրել, սակայն դժբաղդաբար լռելեայն կանցնիմ երկու անգամ ունեցած այցելութիւնս և նկարագրութիւններս հրոյ ճարակ արած լինելուս։

Ջուճանէ 2 ժամ բարձր արևելեան հարաւ ջերմուկներու ճանապարհի վերայէն կերևի Մասիս ցըյատակ, ուստի 1 ½ ժամ խոնարհեցանք անցանք Մուրատի վերայ կազմուած բնական կամրջէն, որ կրային ջրէ կազմուած է և դեռ եղներու վերայ կը տեսնուին ծակոտիք, ուստի ջուրը հոսած վայրը կը քարանայ, կամրջի յատակը կը բղխի մի ջուր, աւազի հատեր բղխման վայրն խաղալով՝ խաւ կը կապեն, ուլինքի չափ կը լինին, ապա այլք. ժողովուրդն կը հաւաքէ, կը ծակէ, ուլինք կը շինէ։ Ձորի այս կողմ կան բազմաթիւ ջերմուկներ, այլ և այլ հանքային նիւթէ բաղկացած. Նպատէն մինչև այս ջերմուկներն տեսնուած ժայռերն ամբողջովին իրարու նման են և կրային նիւթէ կազմուած։